




ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԻԷ. ՅԱՐԻ 1913

Տարեկան 16 ֆր. տակի — 6 րր.:
Հնգամսեայ՝ 8 ֆր. տակի — 3 րր.:
Մեկ թիւ կ'ալարէ 150 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 8, ՕԳՈՍՏՈՍ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԸՆՏՈՆ Վ. ՊՈՐԻԱԳԵԼՆ

ԱՐԶԵՊ. ՂԱՐՍԻ. ԱՆՄԻՆԻՍՏՐԵՏՈՐ ՂԱՐԵ-
ՍՈՒՐԱԶՈՐԻ



1760—1822

Եւստի Բուսիոյ արեւ-
մրտեան կողմն՝ Աւ-
ստիոյ սահմանակից
կայ Կամմերցիպոլիսը
քաղաքը, որ ի հնուց
Լեհական թագաւո-
րութեան երկիր էր,
Ժ.Վ. դարուն մէջերն
Լեիկն գաղթող Հայ-

երը Լեհաստանի Լեմբերգ քաղաքը շրջա-
նագած՝ տեղաւորուած են այստեղ, ուր եւ կան
ցայտօր հայ գաղթականութեան մնացորդները:
Ունեն իրենք Կամմերցի մէջ Ս. Նիկողայոսի
նուիրուած մեծագործ եկեղեցի մը՝ Ս. Աստուա.
ծածնի անուանի պատկերով:

Կամմերցի Հայերն ունեցած են ի հնուց
հետեւ իրենց յատուկ Եպիսկոպոսը, բայց երբ
Լեհաստանի Հայերը կամեցան հաստատու
դուենցան (Ժ.Վ. դարուն սկիզբն), Լեմբերգի հայ

կամ. Արքեպիսկոպոսն եղաւ Նաեւ. Կամմերցի
Աթոռակալ՝ Լեհաստանի վերջին բաժանման
ժամանակ (1795—8) Կամմերցի անցաւ Ռու-
սաց կայսրութեան. Ռուսաց Աշխարհադէր Ա.
Կայսրն ուղեց (1806), որ Լեմբերգի հետ ե-
կեղեցեական յարաբերութեան կապը խզուի եւ
Կամմերցի առանձին հայ կամեցողիկ Եպիսկո-
պոս մ'ըլլայ: Այն առնել Մոհիլեւի (կամ Մոյ-
լով) քաղաք Կամմերցի մաս, Պատուցի իշխանին
ժիւրդութեամբ՝ Կայսրն ուղեց որ Մոհիլեւի
հայ կամեցողիկ ժողովրդապետն Եւստի Վ.
Երիտաւորապետը (Երիտաւորովիշ) կանոնիկոսը՝
Կամմերցի Լատին Եպիսկոպոսին օգնականն ըլլայ,
որպէս զն թէ Լատին եւ թէ հայ կամեցողիկ
ժողովրդեան հոգն ունենայ Լատին Եպիսկոպոսին
իրաւասութեան տակ, եւ երթայ Լեմբերգի
Յովհ. Սիմեոնովիշ հայ կամեցողիկ Արքեպիսկո-
պոսն ըստ հայ ծիսի ձեռնադրուի: Սակայն Սի-
մեոնովիշ դժուարութիւն հանեց երկու ծիսից
փոխանորդութեան մասին եւ ըստ այնմ տեղե-
կագրեց ի Հոգւմ: Ս. Աթոռը բանակցելով Ռու-
սաց կառավարութեան հետ՝ որպէս որ այն
Առաջնորդն ըլլայ միայն կամեցողիկ Հայերու
համար, կողուի Առաքելական փոխանորդ

1. Ինքեցիկուս Ժ.Վ. առանձնակից իշխանութիւն
առած եր Կամմերցի Լատին եւ. Երիտաւոր կամեցողիկ յոյն
(— Ռուսիկն) եւ հայ կեղեցեականները Լատին ձեռով. Անան-
յարեւոյ. Ասոր յարեւել Կեղեցի Ժ.Վ. 23 Ապր. 1793ին հոգ-
մանադրով. Քիչուց — այն իշխանութիւնը, եւ հետեայց որ
միայն Կամմերցի առանձին Երիտաւորական բաժանակ. Ռու-
սիոյ՝ կարեւոր Անապոսիշ իր ձեռն եղողները:

(Vicarius Apostolicus), ըլլայ եպիսկոպոս ձեռնադրեալ, սակայն եպիսկոպոսութիւնն ըլլայ միայն «տարրաւարդ կամ «ի կողման չհեծանուսաց», առով հանգրեւել եպիսկոպոսական իրաւասութիւնը տարածել ընդ ամենայն Ռուսիա: Ասկէ ետեւ Պիոս Է. ֆահանայապետը 1809 Մարտ 22ին Quum nos եւ 28ին Apostolatus officium սկընսուորութիւններով կրկին կոնգրէներ հրատարակեց, որոնցմով հաստատեց հայագգիներու համար սոյն Առաքելական փոխանորդութիւնը, առանց որոշ սեղ մ'իբրեւ ամուսնիստ նշանակելու, եւ Մոհիլեի հայ կաթողիկէ կանոնիկոն Յովսէփ Բերտոլդովիչը՝ անուանեց Եպիսկոպոս Հարցայ, որ հին ժամանակներ փոքր Հայոց Միւլտիլեի մօտ եպիսկոպոսական Աթոռ մըն էր. կոնգրէները զոյգեց Վիեննայի Առաքելական Նուիրակին ձեռք Էմմերիքի հայ Արքեպիսկոպոսին:

Այնուհետեւ Կայսրն 1810 Նոյ. 7 թուակիր ուկազով զԲերտոլդովիչը անուանեց եպիսկոպոս-Առաքելոր կաթողիկէ Հայերու՝ ոչ միայն դամբիցի շրջանին, այլ ընդ ամենայն Ռուսիա, Խորվ, Ցփղիս եւ միշեւ Աստրախան, տարեկան 3000 ռբ. (ըստ АКТЪ Հար. Թ. №. 148՝ 6000 ռբ.) թողալ նշանակեց եւ անուանեց զՆերք Եպիսկոպոս Ս. Աննայի Կարգին: Բերտոլդովիչը նոյն տարին ձեռնադրուեցաւ ի Էմմերիքի, Հայոց Սիմֆուլիչ Արքեպիսկոպոսն, եւ հաստատուեցաւ ի Մոհիլեւ, ուր 1814ին Հայոց եկեղեցւոյն կից, եպիսկոպոսարան եւ ժողովրդապետաց կանգնեց, եւ 1816ին վախճանելով թաղուեցաւ իր եկեղեցւոյն մէջ աջակողմեան խորանին առջեւ: (Տես այս մասին Ռուսիոյ ներքին գործոց Պաշտօնաւանի գրութիւնն ի 27 փետր. 1823 АКТЪ Հար. Թ. №. 707, եւն, ոչ այնչափ ճիշդ տեղեկութիւնները՝ Սարուխան «Մշակ», 1903, Թ. 113, եւ անոր վերջին ժամանակի ձեռագիրները, Սարսպան Հ. Ի. «Հ. Ա.» 1903, էջ 199, Յուշարձան, 1912, էջ 379:)

Բերտոլդովիչին Տեղապահ ու Աթոռական անուանուեցաւ, կարգադրութեամբ Մոհիլեի լատին Մետրապոլիտն, որ բովանդակ Ռուսաստանի կաթողիկէայց Primasն էր, ծերունի Տէր Անտոն Վարդերտեանիչ՝ Լեմբերգի թեաւնեանց կղերականը կրթուած, որ Կամեռիցի կաթողիկէ Հայերու «աղմիկստորաւոր», (= ժողովրդապետ) էր, եւ ըստ կայսերական հաստատութեան եւ հրամանին՝ փոխադրուեցաւ ի Մոհիլեւ:

Հանգուցեալ Բերտոլդովիչին իբր յաջորդ Ս. Ժողովոյ կողմանէ կ'ուզուէր Պոդոսկ. Շահդուլեան, որ Հռոմի Ռեքրանեան Դպրանոցի աշակերտ եւ Ախալցխայի (տակաւին Թրքաց իշխանութեան տակ) փոխանորդի տեղապահ (vice vicarius) էր, միշեւե Մոհիլեի եւ Խորվ ժողովրդեան, եւ ինչպէս կ'երեւայ՝ նաեւ ռուս պետութեան ընտրելին էր՝ Ղարաուսպաղի «աղմիկստորաւոր», կողուող Անտոն Արքեպիսկոպոս Պուրադեան, որուն ամբողջ կեանքին պատկերն այս առթիւ երեւան կ'ըլլէ, հետեւեալ պարագաներու մէջ:

Իր ինքնագիր մէկ գրութեանը համեմատ՝ զոր ամբողջ յառաջ պիտի բերեմ՝ քիչ մը վար, ծնած էր 1760 Օգոստ. 6ին ի Բուլթայի, որ այն տանն առական պարսկական էր, կաթողիկէ հայ ծնողքէ, եւ Սիրուած Տէր Յովհ. Խոջայով քահանայէ, որ Առաքելական միսիոնար էր այնտեղ: Իր պապն էր՝ Տէր Գրիգոր Աւագ քահանայ, որ առաջին անգամ ի Բուլթայիս մացուց կաթողիկէութիւնը: Անտոն յետոյ Պոլսն գացած է, եւ այնտեղ ռուսմ առնելով՝ Արարկիի իգնատարու Արքեպիսկոպոսն, որ ի վաղուց կաթողիկէ եղած էր եւ սաոր համար Հայոց Պատրիարքէն Պոլսն բերուած եւ 1789ին Զաքարիա-Պատրիարքն հայաձեռնելուն ենթարկուած, 1790ին քահանայ եւ վարդապետ ձեռնադրուած էր: Ցարի մ'ետքը Մոսկովի (ռուսական) կաթողիկէ հայ ժողովուրդը զՆերք իբր հովիւ հրահարեց. ինքն ալ Պոլսը Առաքելական Նուիրակ Անտոն փրանկ. ֆրանկիս Արքեպիսկոպոս հրամանաւ 1792 Յունուար 20ին Մոսկով եկաւ, եւ 1792 Ապր. 3ին ռուս կաաւարութեան հրահանգին համեմատ՝ հաւատարմութեան երդում տուաւ, եւ Ռուսաց պետութեան մշտնջենական հպատակ ընդունուեցաւ:

Հինգ տարի ետքը պատկանաւոր իշխանութեան հրաման ստանալով՝ ծննդավայրը՝ Պարսից կողմեր գնաց իբր Առաքելական միսիոնար, եւ անցնելով Ռուսաց երկիրը՝ Աստրախանու եւ «Բոլոր ուղղափառ բնակչոցն իզմիստու հոգեւոր կառավարել», անուանուեցաւ Հռոմայ Ս. Ժողովոյ ասանձինն հրամանագրով: Այստեղ մնաց ութ տարի:

Անտոն Վ. հետամուտ եղած էր բժշկութեան արուեստին, ինչպէս շատ լատին միսիոնարներ կ'ըլլային, որով աւելի դիւրաւ եւ սիրով կը հիւրընկալուէին քրիստոնեայ հասարակութիւններէն, եւ նոյն իսկ մահմադականներէն: Ցփղիս գտնուած միջոցին՝ 1810ին, բա-

բեկամացած էր Էլմիթանի Եփրեմ՝ Կաթողիկոսին՝ որ «ուներ ցաւ հիմիրիդէս», Կաթողիկոսն հրաւիրեց Անտոն Ա.ը, որ Արարատու երկիրն անցնի եւ զինքը դարմանէ: Անտոն Ա. հետեւեցաւ հրաւիրին, բայց հաջեւ եօթ՝ որ կրցաւ Էլմիթան Կաթողիկոսին մօտ մնալ. վասն զի Արարատու Պարսիկ իշխանն իմանալով՝ որ անիկայ բժշկութիւն գիտէ, զինք առաւ երեսան տարաւ, ուր ականայ չորս տարի իբրեւ Առաջնորդ մնաց: Այս առթիւն Անտոն Ա. կը գրէ Կաթողիկոսի մասին, որուն հետ կրնական բանկցութիւններ ունեցած էր. «Խոստովանեաց Եփրեմ՝ զամենայն մատուս հաւատոյ զոր ինչ պահանջէ սուրբ Եփեղեցի մեր, սակայն վասն երկիւղի ընակչաց ոչ կարաց յայտնել գրով»:

Ղարս եւ Անաշնոյս գաւառի բահանայքն ու ժողովուրդն (սամանեան) 1814ին Եփրեմ Կաթողիկոսն խնդրեցին, որ Անտոն Ա.ն իրենց Առաջնորդ Եփրեմի պիտկոպոս կարգէ: Եւ աւանեցաւ Եփրեմ Կաթողիկոս, Անտոն Ա. առաջարկութիւնը սիրով յանձն առաւ երեսանէն ազատելու համար, եւ պայմանաւ «Ննգովելոյ զժողովն քաղկեդոնի եւ զսուրբ Լեւոն Պապ», 1815 Մայիս 9ին Եփրեմի առաջարկեցաւ Եփրեմ Կաթողիկոսէն, իբրեւ Առաջնորդ Ղարսի, եւ որովհետեւ Ղարսայ վանքը Կաթողիկոսաց եւ Արքեպիսկոպոսաց նիստ էր, ինչն ալ Արքեպիսկոպոս անուանուեցաւ, եւ նստաւ Ղարս, որ այն ատեն 6000 հայ տուն ունէր:

Քիչ ետքը Եփրեմ Կաթողիկոս հրամայեց իրեն, որ Պարսից Շահին եւ Շահպատէին երկուսն ընծաներով, եւ ասոր համար ստիպեց զինք որ Պարսից հպատակութիւն առնու: Սակայն Անտոն Արքեպ. յանձն չառաւ, վասն զի, Ռուսաց մշտնջենաւոր հպատակութեան երբեմն առած էր: Ստիպուեցաւ Ղարսէն հրաժարիլ, եւ անցաւ Կ. Պոլիս:

Այստեղ գիմց Առաքելական Նուիրակ՝ Վիկար Բորեզի Արքեպիսկոպոսին, հաւատոյ դաւանութիւն տուաւ անոր եւ արձակում առաւ: Ասէ՛ք անցաւ Լիբանան, ուր քիչ ատեն հիւր մնաց՝ կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Տիրգոր. Ը.ին, ինչպէս նաեւ Անտոնեան Միաբանութեան վանքն, եւ 1816ին վերադարձաւ Պոլիս:

Յիսուսեանց Միաբանութիւնը 1680էն սկսեալ հետզհետէ լայնածաւալ միախառնական գործունեութիւն մ'ունէր Եփրեմ, Վրաստանի՝

Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ: Ամեն ժամանակ 300է աւելի Յիսուսեան միախառններ այս երկիրներու մէջ կը գործէին, իրենցմէ իւր 10 հայազէտ անձինք յատկապէս Հայերու համար որոշուած էին: Ասոց մեծըն էր նաեւ Եփրեմ Կաթողիկէ Հայերու հոգեւոր խնամքը, մինչեւ որ 1773ին Միաբանութիւնը Հռոմայ կողմանէ բարձուելով Եփրեմ Հայերի ի մասնաւորի մնացած էին անխնամ, որով Պոլսոյ Առաքելական Նուիրակէն հայ բահանաներ խնդրեցին: Պոլսոյ Առաքելական Նուիրակին եւ անդղոն կաթողիկէ հայ հոգեւորականաց որոշմամբ՝ Անտոն Արքեպ. Ղարատուկազար զբոլեցաւ ռուսական անցագրով, ինչպէս նաեւ քանի մը վարդապետներ Անտոնեան Միաբանութեան ղեկուած էին 1815ին: Ղարատուկազարի կաթողիկէ Հայերուն մէջ կը գտնուէին Ղարսէն գաղթած շատ ընտանիքներ, ինչպէս նաեւ 14 տուն Տրապիզոնէն:

Արդ, Բրիտանիոյ ինչ մահէն ետեւ՝ կառավարիչ ազմիրխարատոր Անտոն Ա. Վարդեմեսելէ հետաժուա եղաւ Մոհչէի հայ կաթողիկէ Աթոռին պատշաճ Առաջնորդ մը գտնելու: Եւ արդէն 30 Հոկտ. 1817ին կը գրէ առ Անտ. Արքեպ. Պարսկեան ի Ղարատուկազար՝ թէ ինքը Մոհչէի եկեղեցական եւ աշխարհական հաւատացեալներուն հարցուցրէ՝ զով կը բաղան իրենց Առաջնորդ, եւ ամէնքն Անտոն Արքեպ. Պարսկեանն ուղեր են: Քիչ ետքը Մոհչէի լատին Մետրապոլիտան Ստանիսլաւս Սեսարէնչէվիչ Նոյն 1817 Ղեկաւ. 10ին կը գրէ Անտոն Արքեպ.ին, որ կենաց ընթացքն համառօտիւ հաղորդէ, որպիսութիւնն իմանալու եւ պէտք եղած տեղեր տեղեկութիւն տալու համար: Անտոն Արքեպ. ութ կտոր վկայականներ զգնելով եւ առանձին գրութեամբ մը տեղեկութիւններ կու տայ, ինչպէս կ'ընեն այն ինքնագիր նամակէն զոր յուսալը պիտի բերենք: Հ. Արիստ. Ա. Ազարեան, Վիեննական Միսիթարեան (յիտոյ Արքայայր) որ 1821ին մինչեւ Մոհչէի եւ Ղարատուկազար ճամբորդած եւ հիւր եղած է Անտոն Արքեպ.ին

պի կառաւի հաշմանքը, զոր ծիփելի գափուին կոծաւորներուն եւ կաթողիկէ Հայերուն զեմ՝ յարուցած եւ Էլմիթանի Կաթողիկոսը (Առաւանատուր Համատանցի) եւ Միստա Ա.ը, որոնք միախառնաց ժողքը կը քննեն, եկեղեցոյ փ մասն բարբարոսքն հիմարտակ կ'ընեն, եւ կաթողիկէ Հայերն ու միախառնները ընկնաւ երգուած եւ, կը խնդրէ որ Պարսից պետութեան մէջ գտնուող կաթողիկէներն ու միախառններն պնդեալ պաշտպանէ, որ պէ՛ս հերձուածողներուն հաշմանքներէն ազտա ըլլան (տ. Bullarium).

1 Կէնճեւ Ժ.Ս. հաճանապարհ 3 Յունուար 1719ին նամակ կը գրէ առ Շահ Պարսից, որ գաղթեցնէ՛ր տայ

(19 Ապր. 1821), կը գրէ անոր մասին (Թղ. 10 Յուլ. 1821 ի լեմբերգ). «Կ'այր անկեղծ եւ անինթելիգ, կամեցող բարեաց Հասարակաց, անինչ եւ արհամարհող փարթամութեան եւ հայր աղքատաց»,

Արդէն 1817 Գեկա. 10ին Մոհհիլեի աղմկիտարատոր Վարդերեհեւիչ իմացուց Անտոն Արքեպ.ին, որ Մետրապոլիան Հոռոմ գրած է ի նպաստ իրեն հաստատութեան ի Ս. Գահէն: Յաջորդ տարին Մարտ 26ին հայ կաթողիկէ հասարակութիւնն ալ Լատին Մետրապոլիան գրեց եւ ինդրեց՝ որ հաճի ուր հարկն է դիմում ընել՝ որպէս զի Անտոն Արքեպ. Մոհհիլեի հայ եպիսկոպոսին յաջորդ անուանուի: Նոյն 1818 Մայիս 19ին Ռուսաց կայսրին Ամէլնիդ կու գայ. Անտոն Արքեպ. հայ կաթողիկէ հասարակութեան կողմանէ կը ներկայանայ կայսրին, եւ ժողովքեան կողմանէ աղերսագիր մը կու տայ: կայսրը շատ սիրով կ'ընդունի զինքը եւ կ'ըսէ հանգուցեալ Քրիստափորովիչէ տեղը զինքը հայ կաթողիկէներու Առաջնորդ պիտի դնէ: Նոյն տարուց Յուլիս 12ին կայսրական ուկազ մ'ելաւ՝ որով Անտոնի Արքեպիսկոպոսութիւնը կայսրին կողմանէ կը շննցուէր եւ Ռուսաստան մնալու թոյլ կը տրուէր: Իսկ Հոկտ. 10ին տրուեցաւ իրեն կայսրական կառավարութեան կողմանէ լանջախաչ, եւ Գեկա. 11ին կայսրական ուկազն անուանեց զինքը հայ կաթողիկէ Արքեպիսկոպոս Մոհհիլեի, ի միասին յանձնուեցաւ իրեն միանուագ 1000 ըր. նուէր:

Սակայն, երբ 1818 Յուլիս 12ի ուկազն ելաւ՝ Մոհհիլեի լատին Մետրապոլիտոն Օգոստ. 15ին գրեց Անտոն Արքեպ.ին, որ առ այժմ Ղարաառազարի «աղմկիտարատոր», (ժողովրդագրեց) ըլլալ եւ այնպէղ մնալ՝ մինչեւ որ Ս. Գահէն վիճակաւոր հաստատութիւնը գայ: Մոհհիլեի հայ կաթողիկէ եպիսկոպոսութեան յաջորդութիւնը յաջողընելու սոյն ճգնաժամին մէջ՝ եփրեմ կաթողիկոսի կողմանէ Անտոն Արքեպ.ի դէմ կայսրը բողոքագիր մը մատուցուած էր, ինչպէս կ'իմացուի յաջորդ դէպքէն:

Երբ 1819 Յունուար 17ին բազմութիւն հաւասարեցող Անտոն Արքեպ.ին քով հաւաքուած էին անուանը շնորհաւորութեան համար, յանկարծ սարսնիկ Միկիփորով կու գայ եւ Արքեպ.ին կ'ըսէ, թէ կայսրը հրամանն է՝ կոպեռնատոր երթանք: Արքեպ.ն յանկարծ կը սկզբանայ եւ քանի մ'օր անկողին կը մնայ: Յունուար 23ին կայսրին կողմանէ յատուկ

«փեթլէ», կու գայ գրով մը, թէ «Անտոն Արքեպիսկոպոս Պուրատեան, եթէ իցէ ի քաղաքին Ղարաառա, մնացէ անդ, եւ եթէ ելեալ իցէ անտի վերադարձի ի տեղի իւր, քանի վերահասութիւն նորա» միայն յիշեն կախեալ է, կայսրը հրամանաւ՝ կենալ միիտար կաթողիկէ Արքեպ.ին կը պահանջէ՝ օրէնսէնի», որպիսութեան 30 Յունուար 1819, Թ. 155, թղթով: կայսրը կը պահանջէր հետեւեալ հարցմանց պատասխանը, որուն պատասխանած է իսկոյն Անտոն Արքեպիսկոպոս, քիչ վարն յառաջ բերուած նամակին համեմատ.

1. Հարց. «Ինչու թողուցիք հումեական եկեղեցւոյ դաւանութիւնը»,

Պա. Բնաւ չթողուցիք քրտի:

2. Հ. Ինչու Լէիք յանձնուած վիճակը,

Պ. Պատրիարքին պահանջման չուկեցի հետեւի եւ Ռուսաց հպատակութիւնը թողու:

3. Հ. Ո՞ր եւ ի՞նչպէս միացաք դարձեալ Հռոմայ եկեղեցւոյ հետ:

Պ. Պոլիս Առաքելական Նուիրակին եւ Լիբանան կաթողիկէ Հայոց կաթողիկոսին քով, որոնց վկայականները Մետրապոլիտն առած եմ:

4. Հ. Ինչու կը կոչուիք Արքեպ., մինչ եփրեմ Պատրիարք ինձ կը գրէ, թէ եպիսկոպոս միայն էք:

Պ. Վասն զի Ղարսի աթոռն Արքեպիսկոպոսութիւն է, եւ իրեն ինծի տուած վկայականներու մէջ ալ Արքեպիսկոպոս կը կոչէ զիս, եւ ինք ձեռնադրեց զիս ուղղափառապէս երկու հայաբէւս քափուշիններու ներկայութեամբ:

5. Հ. Արքեպ. Հռոմէն կանոնական հաստատութիւն առած էք:

Պ. Հոգեւորապէս Մետրապոլիտը պիտի առնու Հռոմէն: Իսկ մարմնաւորապէս կայսրին անձամբ ըսաւ՝ թէ կ'ուզէ զիս Մոհհիլեի հանգուցեալ հայ եպիսկոպոսին յաջորդ դնել:

6. Հ. Հայոց վիճակաւոր եղած ատեն՝ հետեւնիդ զգեստ, անթի, տուք առիթ տալիք:

Պ. Կ'երգնում՝ որ ոչինչ առած եմ, մանաւանդ թէ ինձ սեպհական բաները հոն թողուցի. միայն ձեռնադրութեան ժամանակ՝ իրենց սովորութեան համեմատ եպիսկոպոսական զգեստ մը տուաւ Պատրիարքն, որ Տաղիւ 400 ռուբլի կ'արժէ:

Ասոր վնայ հայ կաթողիկէ հասարակութիւնն 1819 փետր. 23ին կրկին դիմում ըրաւ լատին Մետրապոլիտին՝ որ ջանայ Անտոն

Արքեպ. ին պաշտպանութեան եւ Մոհիլեւի վիճակաւոր կարգութեան:

Կայսերական կառավարութիւնը վերոյիշեալ կասկածները ընկելէ ետեւ՝ արգարացուց զանկիպ, ինչպէս Մետրապոլիտն 1820 Հոկտ. 25ին կը գրէ Անտոն Արքեպ. ին, եւ Մոհիլեւի կառավարութեան զեկուցումը տուաւ, եւ Մոհիլեւի կառավարութիւնն ալ նոյն տարի Գեկտ. 15ին գրեց Անտոն Արքեպ. ին, որ ինքը պիտի խնդրէ Ս. Գահէն անուանեալ Տաստատութիւնը:

Անտոն Արքեպ. կատարեց զայս 16 Յուլիոս 1821 Նամակով, առ Կարգմալ Գահերեց Ս. Ժողովոյ: Ասոր ինքնակը օրինակը ղեկավարէ եւ Նաեւ Ալեքսանդր Միխիլաքանց Ա. Բարիկեան Արքեպ. ին 24 Ապր. 1821 Նամակով, զոր կը հրատարակեմ ամբողջովին: Ասկէ քաղած եմ եւ ալ էր կենսագրութիւնը:

Պայտառագոյն եւ վեմաւոյն իշխան գահերեց Կարգմալ Գահերեց արգաւան ժողովոյն հռովմայ:

Ճշայտ առեւեմ ծիրանափայլ բարձրուն ձերու՜մ, նախ մատուցանեմ ջերմեանդ արտի եւ արտասույն ալը երբեք ազատեմ ասանկոյ նի՛ անուամբ կառուցեալ զիւսուր առաքելոց դիտորդի եւ պողոտի: Ե՛ր միջի եղել արդարեւ նշխարաց, Յետոյ ամենախնարհոյ՜ն ձեր պարզապարտ Տաղարցի մատուցեալ ինքոյ երանելի արքաւան փառքի մերոյ նմ փոխի փառանորդին յոյ՜ քնի, եւ յաղորդին ձեր առաքելոյն Պետրոսի: Ետոյ պայծառապի կորոյնքալոց՝ Ազգեպի եւ եղեց յարեւելոց հաճելոյ ձեռաց: Ոպ առաքի՜ ձի՛ նշնպէս առաքի՜ ձեր ժողովոյն յայտ առեւեմ՝ զեմ՝ որդիութեա՛ն ի՛ 817 իկեկո՛ւ 10. Ռ. 826 հրամայել էր գեղապայտառ մետրապոլիտն մեր Ստանիսլաւ առ սեւաթելեկի թէ՛ զեմ՝ որդիութեա՛ն յայտնեցիք նմ, վն 8 օրինակ վկայական գրեալք իմ՝ միջնորդսն միջովոյ մամուկիտարութիւն Սեւաթելեկի արքեպիսկոպիտն ամբողջովին յղեցի: Այսպեղի են հարցմունքն եւ պատասխանը:

1. Յուլիոսի ծննդեան եւ միտաւե՛ ինչոյ՛, Ծնել էմ՝ ի քաղաքն քաղ. թայիս 1760 օգոստ.՝ 61, յազգափառ Ժնըւոյ, եւ միտուալ յառաջեկական միտմարտէ՛ ի՛ ալ յովհաննիսէ իւշոյովմ:

2. Ակայսի քահանայութե՛ անէ՛, Ստոյցի՛ եմ՝ ի՛ պոյիս 1790 յաղագափ ինչաւոր աղբեղանէ՛ ոպ՛ ի՛ կոնսիտատոր 1797 ի՛ փետրոս՝ 13. Ռ. 89 գրեալ էրեւի:

3. Հրաման թղլտուռն գալոյ՛ ի՛ ռուսաստան, ըստ ինչքանաց մտքգրգռ ժողով՛ ի՛ հրամանաւ անստիտոս արքեպիս փառնշինկոս Բաբայի՛ եկի՛ մեզգոյ 1702, յուլ. թիւ՛ 20:

4. Օրինակ երգմուն՛ ի՛ տեղունէ՛ տունել՛ խաւարաբնակ ռուս. 1813 Ռ. 272 յայտնի՛ եղէ՛ մշտնջենական հպատակ նորին կայսրոս՝ Ն. Ա. մեծունէ՛:

5. Ակայսի՛ վն գործածեց չհաճաքական պաշտոն, ի՛ կողմն տարի եղէ՛ առաքելական միտմարտ, եւ ի՛ կողմն ռուսաց ամա 8 եղէ՛ հոգեւոր կառավարիչ ամ-

տերիտաւ, եւ բոլոր ուղղափառ բնակչոյն կողմաստ՛ եւ ձեր տունել՛ վկայոյ՛ ի՛ն յայտ է:

6. Հրամանագիր երանելոյ՛ ի՛ ռուսաց, ըն ինչքանաց ինչո՛ հրաման եղեւ՛ ի՛ կոնսիտատոր 1797 ի՛ փետրոս՝. 16. Ռ. 89 յորժամ կամայի՛ն կարող եղեց զեւալ յերկրի եւր, Եւ 1810 ընդ է կրեմլոյ պատերազքին գնացի յերկրի արարատաւ, որ է տեղն ախար ու երկրպետէ:

7. եւ 8. Ակայսական գիր վն՛ կանոնաւ որաղեւ յառաջնաւոյ յեպիսունէ՛, եւ վկայական գիր վն՛ ձեռնադրութեան եպիսուն եւ արքեպիսունէ՛, ըն ինչքանաց զարտոյ եւ ախթիպ բոլոր հոգեւորականաց եւ մարտաւարականաց 1815 ի՛ մայիսի 9 եփեմէ՛ պատրիարք արար զիս եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս:

9. Արեւածաշուոյ՛ քո ընդ առաքելական ամ ռուսոյ, Յայտնի է ի՛ իրանան երկի՛ գրիտոր պատրիարքն, ի՛ պոյիս հոգեւորականաց ընդողոյ՛ ի՛ գեղապայտառ քորեգին արքեպիս գրով եւ ռուսաց գեղական բաղքաթով եկէ՛ տաւ:

Ամենա պայծառ ալ իմ՛ 1819 յուլ. թիւ՛. 17 արգաւան ժողովոյց ժողովել՛ էին վն՛ շնորհաւորուն առնաւե ինչո՛ եկն առեւտնիկ միկիկորով թէ՛ հրաման է երթիցոյ՛ ի՛ կուպերնաւ օրն, եւ անդ յանկարծ պատահելով ին՛ տկարութի՛ մնացի առաւոր քանի մի: Եւ ի՛ նոյն տալոյ յուլ. թիւ՛. 23 եկն յորժամեմ կայսրին յառաւի փելթէ՛ գրով որ եհաւ առ մեզ յեթմինքն առաւոր, հրամայելով՛ ի՛ նմ, թէ՛ անտոն արքեպիս պարտաւորեմ, եկի՛ ինչէ՛ ի՛ գլխի զարառա մատուցէ՛ անդ՛ եւ եկի՛ եկեալ ինչէ՛ անտն վերադարձի՛ ի՛ տեղի իւր, քաղցի ընդառաջին՛ նի՛ մայն յինն կարեւոր է: Եւ հրամանաւ ողորմեմ կայսրին պայծառ կենալ միջնոր խալիլին յինն պահանջ որեւեկն որդիտաւթեմ 1819 յուլ. թիւ՛. 30. Ռ. 1 5 հարմարեց եւ պատասխանի:

1. Ան էմ փառիկել էմ զաւառնուն՛ հռովմայ եկի՛նչոյն, Ամենեկն ալ եմ՛ փառիկալ արտի. ոպ՛ ալ էր Տնար առանալ զեմ՛ նշնպէս զնր եկեղեցին հռովմայ. սակայն այսու հնարի միացան, զի հաստատեցին թէ՛ ժողովն քաղիկաւորն նր է, եւ զոր ինչ նեւ զունէ՛ ետուն ին՛ վն՛ հալոյ էր մայն:

2. Եթովմ Տնարայ զմեկն ըն էր թողիք զայն առանց դիտուն նի՛, Պատրիարքն կանցեալ յընէ՛ զիս առ շահն եւ շահչալաց պարտոյ ընկնիւր, յընէ՛ զիս առ շահն եւ շահչալաց պարտոյ ընկնիւր, որում՛ նոյն պատրիարքն հանդիւր եպիսոպ մշտնջենական հպատակ են՛ պարտալ թողին՛ հալիկն սաթիկին զիս երգմունքանել. եւ գրով՛ հպատակ մշտնջենական կայսերական մեծունէ՛ բարի համարեցայ բոա հոգալ եւ ըն մարմնոյ հրամայել ի՛նչոյն:

3. Ուր է ում զարեկի միացող ընդ հռովմական եկեղեցոյն, Նախ գրեմեք ի՛ պոյիս, զի գեղապայծառ քորեգին արքեպիս՛ վերա գրով ձեր միտոյն որ ունի իշխանի ընկալելոյ, եւ գնացի ապա ի՛ լնաւն լիւրտանէ՛ ուր ընալի գրիտոր պատրիարք հայոց ազգափառաց՛ որը ունին վնչաւունել ընկալելոյ:

4. Ընդէր անուանիք արքեպիս զի՛ ի՛ գրուն եփեմ Դ. Եւսեւ առ մեզ երեւի թէ՛ եպիսկոպէ՛, զի՛ քաղց զարտոյ յառաջագոյն էր աղիք Դ. Եւսեւարաց՛ եւ յետոյ արքեպիս. եւ անա մատուցի գիր ձեռնադրուն. եւ

երևաւ եւս իւր գրութիւնք թէ եմ արեւոյն եւ օրհնեաց զիս ըն ծիօն ուղղափառաց. զի ըն նշովնաց զար ժողովն քաղաքացիքն, որ յայնժամ ներկայ էր անդ ի թիֆլիսի մեծաւ որ պտորի ֆիլիպպէ, եւ պատրիս ճափրի. որ գիտեն զէզու հայաց:

5. Արեւոյն ունիք զկանոնական հաստատունք ի կողմանէ հաւաքման, ըն հպեաւ որ պատմականութեան հարկէ գերազայեալաւ միտաբանութեան մեր խնդրել ի գահէն հաւաքման, ըն մարտի 1818 մարտի 19 ոգորման կայսրն եկն ի քաղաքն Կոստանդնուքն եւ խոստացաւ զի ի տեղի հանգուցեալ Եփեսոսի եպիսկոպոսութիւնը հաստատուն դնել:

6. Ձմեռն եւ առաւել քս ի վիճակէ հայոց թէ ցոյցատ թէ անթիւ եւ թէ տարւոյ, լեզուաւ յանունն նիւ եւ ի պատկեր հորին կայսերական մեծութեան օչինք առնել են. նաեւ զանոնք սեղահայեան անկեն իմոյ թողի անդ. միայն ի ժողովն հեռանալուն ըն սովորուն իւրեանց, իւր սեղահայեան հեռադուք եւս հաստատիւ եղանական զգեստ մի որ հարկէ աշխարհքն ունի 400 առաւել. վկայ է ի քառանդին եղիվ ժողովն, եւ կուպերնաթոր, եւ սղարատիւ եւ տեղւոյն ժողովրդը զարմուքն տարիմ:

Միտաբանայլ տի 1818 մարտի 26 հաստատունքն ուղղափառաց գրեաց առ գերազայեալաւ միտաբանութեան զի հաստատունք իմոյ ուր հարկէ ի խնդրել: 1818 յուլի 12. Nr. 1232 ոգորման կայսրն արգաւորաց զիս եւ անուանեաց արեւոյն. մտաւ զի ի առաւանստն. եւ ի նոյն ամի օգոստ 15 Nr. 120 ի գերազայեալաւ միտաբանութեան եղեւ հրաման զի ինքնիմ ատմիկաւորութիւն որուցոյ միջեւ հաստատունք լինի ի գահէն: Եւ ի նոյն ամի հոկտ. 10 Nr. 201 ընկերայ զիսալ ի բարձրագոյն կառավարութեան: Եւ ի նոյն ամի դեկտ. 11 Nr. 3108 ոգորման կայսր անուանեաց զի արեւոյն. եւ առ միտաբան շնորհեաց ինն 1000 առաւել. 1819, փետր. 23 կրկին անգամ հաստատունքն գրեաց գերազայեալաւ միտաբանութեան զի հաստատունք իմոյ:

Արդ ըն որում երկրի պատրիարք անէր ցաւ հիմարկեալ խնդրեաց լինելն առ ժող մի գիւնել ի միտաբան յերկրին արարատու. եւ խոստովանեաց զանժ մասնաւ հատաւոր զոր ինչ պահանջէ նր կեցեցի մեր. սակայն զի երկրի ընտելաց ղ կարաց յայտնել զրով. գիկի եօթն առաւել իմացեալ իշխան արարատու գաւառայն պարագայ լինէ գիտեմ արհեստ թոշիւն տարաւ զիս ի քոջ երևան եւ մացի անդ տկամայ կամք ամն զրիւ, եւ զի ապառնէ անձին իմոյ յօժարեաց ձեռնալ խոյն ի պատրիարքէն երկրմայ, քիչ ի քաղաքաւոր եւ թահչիք ուղղափառաց: Եւ մանաւանդ ի գաւառն Կոստանդնուքն եւ օրջան բնակիչ զոյ ուղղափառաց յայտնի եւ պայծառութեան ձեռնալ. զի այնորեւն եւ ձեռնաբերակ ի վիվ վրաստանս ի քաղաքն քաղաք իմ որ եւ այժմ ի տրուէ առաւել. եւ ողջան բնակիչք են ի նմ պապի իմ տի գրիգոր առաջ քահանայ դարձոյ ի հիմարկեալ յաւաքման Կոստանդնուքն: Եւ զարս եւ Կոստանդնուքն ի տրուէ օտմարդու. ապա ունի ի մոյն ինչորեւ ի նոյն ժողովն զի հաստատն ի հայրենի յերկրն իմ եւ կառավարեցի որ մերձ եւ քաղաք եւ Կոստանդնուքն եւ տեղի ուսումնարանայ: Դոյնպէս ի գաւառն զորմ որոյ ժողովարքն եկեալ են ի գաւառն զարայ որ մերձ եւ պոչոյ, եւ եւ Կոստանդնուքն, եւս Կոստանդնուքն եւ օրջան բարի եւ առաւելաւ:

որս: Ուստի միշտ կառավարէ ատմիկաւորութիւն որ որ գրէ առ իս 1817 հոկտ. 30. թէ հարցի վիճակաւոր տեղւոյն եղելոյ թէ զհազարականս եւ թէ զմարմնաւորական ցանկն վիճակաւոր եղելուէ քս: Եւ ի նոյն ամի դեկտ. 19 Nr. 247 գրեալ եւ նոյն միշտ պատմիկաւորութեան առիւ թէ գերազայեալաւ միտաբանութեան զի հաստատունք քս գրեաց ի նր գահն հաւաքման: Արդ, հրաման եղեւ ի բարձրագոյն կառավարութեան օչ գերազայեալաւ միտաբանութեան մեր 1820 հոկտ. 26 Nr. 710 գրէ միշտ կառավարութեան: Եւ միշտ կառավարութեան ի նոյն ի նոյն ամի դեկտ. 16 Nr. 165 գրէ առ իս թէ եւ ինչորեւ զի զահէն հաւաքման զհաստատունքն:

Եւ հնազանդելով բարձրագոյն կայսերական կառավարութեան համարականաց եւ փոյն զորով անդ մեծագոյն գերազայեալաւ տերութեան:

Յանձնել զիս ի մեծ նիւ եւ ի բարի կամն մեր զոր ինչ հոգին նր անորենեցեւ եւ յարուս ինչայի աղբիւ մերոյ եւ ի փրկել հոգւոյ իմոյ նոյն տի առաւել նորեցեց:

Մնամ գերազայեալաւ աղբիւ եւ գերազայեալաւ տերութեան նիւ ամն աղբիւ յետն պաշտօնայ եւ մշտնաւ նախան հպատակ իւր ժողովրդ:

Անտմե Արեւելին պատգեան:

182 1 յուլիարի. 16:

Ի քաղաքն դարատու:

Ճիշտ այս միւլցին զենետիկի Միխիթարեան Հայրենի սկսան են խրի մի կողմեր հաստատուիլ: Սկզբնաւորութիւնը ժամանակակից նամակներէ քաղաքն տեղեկութեանց համեմատ, այսպէս եղած է:

Հ. Մինաս Ա. Բաշկեան 1819 թ Տրապիզոնի եւ Վ. Պոլսոյ կրօնական խառնակութեանց երեսէն կը փախչի զենետիկ, եւ ասկէ 1820 Ապր. 13ին մեկնելով զինքնայի վրայէն Նիմբերգ քաղաքը կ'երթայ եւ Արեւելի հայաբնակ վայրերը կը շրջի մինչեւ Սուլաւա եւ կը դառնայ Չեռնովցի, ուր 15 տուն հայ կաթողիկէ ժողովուրդը քահանայ չունի. հոն կուզէ հաստատուիլ, սակայն տեղւոյն զինուորական կառավարութիւնը կը ստիպէ զինք անմիջապէս սահմանէն իլլել, նա ալ Ռուսաց կողմը կ'անցնի: զենետիկի Աբրահայրը շնորհակալութեան թուղթ կը գրէ Արեւելի յիշեալ հիւրանկարութեան համար, եւ կառավարիչ իր քահանաներէն զգիւն: Յաջորդ տարին, Հ. Մատաթիա Բուսկիւլճեան զինքնայի վրայէն Նիմբերգ կ'երթայ, Օդեսսա երթալու համար: Նիմբերգի հայ Արեւելի զինքը իր քահանայից զաւր դարձեալ կը հրադէ, եւ մօրուքն անհիւսէ Եւսպի զի իրենս Էվրոպայաները Ագոստինովիչ Արեւելիակոյսին օրերէն սկսեալ (1715—1751) կ'անկուրէին:

Հ. Մինաս կ'երթայ Օդեսսա, ուր ժողովրդեան խնդրանոց համեմատ կը մնայ երկու ամիս, եւ կ'երթայ Ղարաուսուպազար, ուր 200 տուն կաթողիկէսայ եւ իբր 300 տուն ուղեւորութիւնայ Հայեր կային: Այս միջոցին մեր Անտոն Արքեպ. ազմիրխարատոր էր: Անտոնեան Միաբանք բոլորովին մեկնած էին: Արքեպ. ունէր միակ ծերունի պարզուկ քահանայ մը: Կաթողիկէ Հայք ունէին մեծաշէն եկեղեցի մը, փակին մէջ ժողովրդապետանոց եւ զպրատուն՝ 25 աշակերտով, որոնց ուսուցիչն էր Վենետիկի վանքէն մեկնած տիբացու մը:

Ցեղոյն Տրապիզոնցի կաթողիկէ Հայերը կ'ուզեն որ Հ. Մինաս մնայ այստեղ իբրեւ օգնական: Հ. Մինաս կը շքերէ «խալփախ, ճիւղպէ, եւ սեռ թէւալք փապուճ», հագած, Հայոց քահանայներուն նման, փրկուն կ'առնուր միայն եկեղեցոյ մէջ: Իսկ Արքեպ. եւ միւս քահանայն ունէին «շափղա եւ ղունտուրա», Հ. Մինաս սերտ բարեկամութիւն կը հաստատէ տեղւոյն Հայոց Առաջնորդին եւ քահանայից հետ, կաթողիկէ ժողովուրդը կը յորդորէ՝ որ 12 հոգաբարձուները վարչութիւն մը կազմեն եւ եկեղեցոյ ու զպրատան կառավարութիւնը ձեռք առնուն եւն: Ասոր վրայ 1821 Ապրիլի վերջերը կառավարիչ Պարգերեսեւիչէ հրաման կու գայ Հ. Մինասին, որ պաշտօնական վկայականներու սկզբնագրերն ղրկէ իրեն, եւ առ ժամ եւս կենայ քարոզիչ եւ խոստովանողնելէ: Վասն զի լատին Մետրապոլիտն ամբաստանութիւն եկած էր եւ խնդիր պիտի քննուէր: Կռանօթ չէ եզրակացութիւնը, սակայն նոյն միջոցին Հ. Աթանաս կը հաստատուի Օդեսսա, եւ Հ. Անանիա ճեկալեան ի Ղարաուսուպազար, Հ. Մինասին քով:

Հ. Մրապեան Անտոնեան Միաբանութեան դիւանի ժամանակակից գրութեանց համեմատ կ'աւանդէ (Հ. Ա. 1903, էջ 201) թէ Անտոն Արքեպ. 1822ին վաթճաճած եւ ի Ղարաուսուպազար թաղուած ըլլայ, սակայն հետեւեալ պարագաները չեն ձայնակցիր ստոր. վասն զի Ղարաուսուպազարի այժմու ազմիրխարատոր Հ. Մանուէլ Ա. Մաշուրեան, Վիեննացի Միխիլաբեան, ի պատասխանի հարցմանց կը գրէ 12 Յունուար 1911 թուականու. «Ցեղոյն ննչեցելոց գրքին մէջ նայեցայ 1803—1838 եւ Անտոն Արք. Պուրատան ննչեցելոց մէջ չկոյցայ գանել, բայց նոյն ննչեցելոց գրքին մէջ հետեւեաները գտայ . . .

“1820 Սեպտ. 19. Եւ Անտոն Արքեպ. պուրատեան թաղեցի ի գերեզմանատուն հասարակաց, Սրբուհի դուստր իշխանիոսի Մահգետի Ղապարին իբր տան ամաց:

“1821 Մարտի 1. Եւ Անտոն Արքեպ. եւ ազմիրխարատոր տեղւոյ թաղեցի Պետրոս Լեհցի իբր եօթնասուն ամաց ի գերեզմանատուն հասարակաց:

“1821 Մարտի 2. Եւ Անտոն Արքեպ. եւ Ազմիրխարատ. տեղւոյ թաղեցի Մարիամ կին պապիկի առգլիշեան իբր ամաց վաթսուն ի գերեզման հասարակաց բոտ օրինի:

“1821 Մարտ 10. Եւ Անտոն Արքեպ. հանդերձ քահանայական դասուք՝ թաղեցի Ամստ Մեկքոնի դուստր խորթուիցի կին սերորի ամաց քսան եւ հինգ ի գերեզման հասարակաց, խոստովանութեամբ, հաղորդութեամբ եւ վերջին օծմամբ:»

“Յիշեալ Արքեպ.ը 1820ին չորս անգամ ըրած է, իսկ 1821ին ալ երեք անգամ ըրած է. վերջինը Ապրիլ 3ին է. անկէ ետեւ անոր, անունն ալ չկայ:

“Նոյն անձն 1820ին եօթը զսակ ըրած է. իսկ 1821ին մէկ զսակ կատարած է՝ Յունուար 2ին:

“Ցեղոյն գերեզմանատան մէջ յիշեալ անձին համար տապանագիր չկայ: Նոյնպէս եւ կեղեցոյս դիւանատան մէջ այն անձին վրայօք քնառ յիշատակութիւն չկայ:

Այսպիսի պարագաներու մէջ Ռուսաստանի հայ առաջին եպիսկոպոսութեան յաջորդին խնդիրը ռուս պետութեան եւ Հռոմայ մէջ բաց մնացած է մինչեւ 1909: Միհիլեւի կաթողիկէ Հայերու եկեղեցին վերստին ալ ծերունի Պարգերեսեւիչ կառավարչին մահուանէ ետեւ (1822)՝ ազմիրխարատոր եղած է Վիեննայի Միխիլարեան Հ. Ռափայէլ Ա. Ռեզնեան, որ անկէ քանի մը տարի յառաջ իբրեւ օգնական կը գտնուէր Պարգերեսեւիչի մօտ: Ռեզնեանի մահուան (1863) լուրս առնելուն պէս Միաբանութիւնը կը ղրկէ իբրեւ յաջորդ Հ. Նիկողայոս Ա. Ա. գերեանը, որ Հայերու եկեղեցին լատին եկեղեցականներու մատակարարութեան յանձնուած ըլլալը տեսնելով, կը ստիպուի անձոր վերադառնալ: Իսկ Վաթնեցի Հայերու եկեղեցին արգէն անկէ յառաջ լատիններու անցած էր:

Երբ 1845ին կայսերական հրամանաւ քափուշները կոկիսէն հետացուցան, 1847ին հրատարակուեցաւ պետական օրէնք մը (Օրինագիրք Հոր. ԺԱ. § 75), որով Ախալցխայի վեճակի կաթողիկէ Հայեր Տրապիզոնեան (Սա-

բաղով) լատին եպիսկոպոսին իրաւասութեան նիւթարկուեցան: Իսկ Հայ կաթողիկէ եպիսկոպոսութեան խնդիրը թէպէտ այլեւայլ առնւն. ներ յուզուեցաւ կառավարութեան մէջ, ինչպէս 1834ին, սակայն Հռոմայ Հետ միաւայնութեան մը չյանգեցան. ինչպէս կ'իմացուի 3 Յուլ. 1848ին Պիոս Թ.ի առ Մետրապոլիտան գրած կոնգրակէն: Ասոր մէջ Ս. Քահանայապետը թախծութեամբ կը գրէ՝ թէ այլեւայլ դժուարութիւններ պատճառ կ'ըլլան, որ Հակառակ իր ընդմ բաղձներին՝ Ռուսոյ արեւելեան ծէսի կաթողիկէներն, ինչպէս Ռուսները եւ մանաւանդ Հայերն իրենց սեպհական եպիսկոպոսներն ունենան, որպէս զի աւելի զիրութեամբ ընթանան ի ճանապարհին փրկութեան, կարելի չեղաւ տակաւին Նոյնը գործադրել. անոր համար կը հրամայէ լատին Մետրապոլիտն՝ որ ամէն կերպով պահպանէ արեւելեան յեկեղեցոյ աւարողութիւնները եւ մեծ ուշադրութիւն գար. ձընէ անոնց:

Կերէպէտ մեր օրերն առանձինն ջանքով կ'օժիպին Հայ կաթողիկէ Հասարակութեան, գտնուեցաւ երկակողմանի լուծումը, եւ 12 Սեպ. 1909ի կայսերական ուկազով Գեր. Սարգիս Ա. Տէր-Արքահայրն անուանուեցաւ «Առաքելական Եպիսկոպոսարէլ», եպիսկոպոսական լիուրի իրաւասութեամբ, Ռուսաց պետութեան սահմանի մէջ գտնուող բովանդակ կաթողիկէ Հայերու համար, եպիսկոպոսական կարգ տրուիլը վերապահելով մերձաւոր ժամանակի. իսկ աթոռանիստ քաղաքն որոշուեցաւ Տփլիս:

Հ. ԳՐ. ԳԱՆՄԱՐԱՅԻՆՆԵՍ



Գ Ա Տ Ս Ս Ե Կ Ա Ն

ՎՐԱՅՈՒՆ ԲՈՒԳՐԱՅՈՒՆԵՍՈՒ ԾԱԿՈՒՄԸ (Հարսնութիւն)

Ժամանակագրութեան համաձայն Աշոտ կիւրապապա իր իշխանութիւնն ընդարձակեց ի վնաս Դանարաց եւ Կաթիթի վիթալարին, որուն օգնական էր Տփլիսի ամիրան: Խալիք Բ. Եղիզ Բ. Մահաբ. ալ-Մամանէ՝ անկարող Արզ ալ-Վլա Բ. Ահմադի տեղ՝ Հայաստանի կուսակալ անուանուելով, երբ երկրին մէջ Հաստատուեցաւ, Մուհամմադ Բ. Ատաթըն իրեն կանչեց եւ ներում շնորհեց անոր, սակայն երբ անոր գաշակիչներն՝ Դանարաց ալ Հայատակութիւն խոտտացան՝ Խալիք՝ Մուհամմադ Բ. Ատաթըն զգրուելով՝ շնորհուեցաւ,

այլ անոնց դէմ քալել, Վրաստանի մէջ վրանի յարձակեցաւ, զարկաւ եւ նախիրն առաւ. յետոյ զինքն օտարեց խաղաղութեան դաշինք դնել եւ որոշուեցաւ որ անոնք 3000 նժույզ եւ 20,000 ուշխար տան: Հաս Աշոտի Խալիք Բ. Եղիզի գէմ մղած զուիններն չեն յիշուի սակայն անտարակաւ սեյի է որ այս ժամանակս կ'իլլան. թէ է այս ստուգէ, այն տանք Աշոտի Արտաւուշ Հաստատուիլն ալ Մամանէ կառավարութեան (813—833) վերին տարին երևան է, ասով ինքեին կը տեսնուի թէ ժամանակագրին Աշոտի մահուան համար տուած թուականը սխալ է: Մէկալ կողմանէ տակալ գեռ կարելի չէ՝ Տփլիսի վրայ Խալիքէ Նշանակուած Ըուարի որդի՝ Ալի ամիրային մասին որոշ վճիռ մը տալ: Անունն նայելով հօգեդար ըլլալու է Խահակ Բ. Իսմայիլ Բ. Ըուարի, որուն հայրը Իսմայիլ Բ. Ըուարը Վրաստանի մէջ Մարտան Բ. Մուհամմադ Բ. Մարտանի մէկ պաշտպանութեան էր եւ Ալիին կուսակալութեան սիրտը արդեն ետհալ Բ. Սայիթի՝ Աւաւաւանի աստղին՝ հետ միացած Հայաստանի տիրացած էր: Սակայն (գեռ ալ-Մամանէի ժամանակ) Խալիք Բ. Եղիզի երրորդը յաջորդէ Հասան Բ. Ալի ալ-Բաղդաթի, որ ալ-Մամանէի կը կոչուէր, ժամանակ՝ կը տեսնենք թէ Խահակ Բ. Իսմայիլ Բ. Ըուարը ալ-Թիֆլիսի Գուրգանի տէրն էր: Բաղդաթի կուսակալը վերջնայ Գուրգան թուղթ մը գրեց պահանջելով որ դրամներն տայ եւ երբ Իսմայիլ զեղաւ Տփլիսի վրայ քալել, ասով վերջին գումար մը վճարելով դիմէ եւ զարեցնէ, երբ ալ-Մուտալիմի ժամանակ (833—842), Մուհամմադ Բ. Խալիք Բուխարա—Խոտաշի՝ Ալիինէ Հայաստանի կառավարութիւնը ստանալով Դանարաց դէմ կուսեցաւ եւ Տփլիսն եկաւ իւհակ Բ. Իսմայիլ, ջանաց իրեն հետ յարմարել, Բուխարա—Խոտաշի յաջորդը Ալի Բ. ալ-Հուսայն Բ. Սիբա ալ-Քալիսին անկարող ըլլալով Մուտալիմ Խալիք Բ. Եղիզը վերադառն Հայաստան զրկեց, սակայն անոր երկիւղը Հայաստանի մէջ այնչափ տարածուած էր որ բոլոր իշխաններն ինք դիմեցին ապահովեցին անին եւ ապստամբութեան կը պատրաստուէին: Այս լուրին վրայ ամիրապետը ստիպուեցաւ Խալիքն ետ կանչել եւ Ալի Բ. ալ-Հուսայնը վերադառն Հաստատել: Խալիքի այս երկրորդ կուսակալութեան ժամանակ կ'իյնայ անոր Գաւապի մօտ Գարգարա նաղիներն պարտուիլը: Երրորդ անգամ մը եկաւ Խալիք լիազոր իշխանութեամբ եւ թալանավոր բանակով մը ալ-Վաղիթի ժամանակ (842—847), իր շուռ սարսափեցուց տկար բռնակալները, այնպէս որ շատերն իրենց Հայատակութիւնը ցուցնելու աճապարեցին. բայց ինքը միայն գանոնք կ'ուզէր ընդունել, որոնք իրենց մեծարանքը նուէրներն անձամբ կը բերէին: Խահակ Բ. Իսմայիլէն ալ պահանջեց որ իր ստըն գայ, եւ երբ չեկաւ անոր դէմ

1 Եպիսկոպ. Բ. 870, 14—877, տես նաեւ վերջ 463-ի. ՄԱՄ. 1912, Բ. 12, էջ 725.

2 Եպիսկ. Բ. 871, 1—4, տես նաեւ 463-ի. ՄԱՄ. 1912, էջ 721—722, 728.

3 Եպիսկ. Բ. 877, 18—877, 2, տես 463-ի. ՄԱՄ. 1912, էջ 728.